

**Ռ. Կ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ, Արևմտահայերենի դասագիրք, Երևանի համալսարանի
հրատարակչություն, Երևան, 2006, 495 էջ:**

Արևմտահայերենը, որպես առանձին դասընթաց, արդեն մեկ տասնամյակից ավելի է, որ դասավանդվում է Երևանի պետական համալսարանում: Վաղուց հասունացել էր այդ դասընթացի համար առանձին և ամբողջական դասագիրք ունենալու պահանջը: Այս դասագրքի հրատարակությամբ լուծվեց կարևորագույն մի խնդիր. բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողները, հայոց լեզվի ուսուցիչները և բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են լեզվի, մասնավորապես՝ արևմտահայերենի հարցերով, իրենց ձեռքի տակ ունեն մի գիրք, որով կարող են ըստ ամենայնի ծանոթանալ մեր գրական լեզվի մի կարևոր հատվածին՝ արևմտահայերենին: Իհարկե, մինչ այս գրքի հրատարակությունը հրապարակի վրա ունեցել ենք արևմտահայերենը ներկայացնող դասագրքեր ու ձեռնարկներ: Հատկապես պիտի առանձնացնենք արևմտահայ քերական Հովհաննես Գազանճյանի «Նոր քերականություն այդի հայերեն լեզվի» դասագիրքը, որը, 1910-ին հրատարակվելով Պոլսում, տասնամյակներ շարունակ Արևմտյան Հայաստանի դպրոցներում, ավելի ուշ նաև Սփյուռքի հայ գաղթօջախներում ծառայեց իբրև գործածվող հիմնական դասագիրք, ունեն մեկ տասնյակից ավելի հրատարակություններ և դիմացավ գրեթե կեսդարյա փորձության: Ուսումնական ձեռնարկներ ու դասագրքեր են ստեղծվել նաև Բեյրութում, Անթիլիասում, Աթենքում, Երևանում և այլուր: Դրանք բոլորն էլ սակայն ունեն որոշակի ուղղվածություն. կան լեզվի բոլոր մակարդակները հավասար չափով չեն ներկայացնում, կան առավելապես ծառայում են գործնական-ուսումնական նպատակների, կան էլ, որ առավել է բնորոշ բոլոր դասագրքերին ու ձեռնարկներին, միտում չունեն մշակելու լեզվի գիտական տեսություն:

Ռուբեն Սաքապետոյանի «Արևմտահայերենի դասագիրքը» առանձնահատուկ տեղ ունի հայոց լեզվի արևմտահայ ճյուղին նվիրված այս գրքերի շարքում նախ և առաջ որպես բուհական դասագիրք:

Երկար տարիներ Երևանի պետական համալսարանում դասավանդելով արևմտահայերեն՝ հեղինակը դասագրքում ամբողջացրել է այդ ասպարեզում իր կատարած ուսումնասիրության արդյունքները: Իսկ դրանք բավական խոսուն են՝ արևմտահայերենի գործնական աշխատանքների ձեռնարկ, արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, արևմտահայերենի բառակազմն ըստ ամենայնի ներկայացնող գիտական ծավալուն ուսումնասիրություն, որը ներառում է նաև արևմտահայերենի հնչյունաբանության հիմնական դրույթները, և որը դարձավ հեղինակի դոկտորական ատենախոսությունը («Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները», Երևան, 2004): Այդ ամենի հետ մեկտեղ՝ արևմտահայերենի քերականության բաժինը ներկայացնող ուսումնասիրություն, որով և ամբողջանում է արևմտահայերենի դասընթացը:

Սա արևմտահայերենի՝ իբրև առանձին և ամբողջական լեզվական համակարգի նկարագրություն չէ: Ներկայացնում է հայոց լեզվի գրական երկու տարբերակների գույադրական պատկերը՝ երկետ ունենալով արևելահայերենը. ընդգրկում է արևմտահայերենի հնչյունական, բառապաշարային ու քերականական հիմնական առանձնահատկությունները, որոնք առկա են արևելահայերենի համեմատությամբ:

Լեզվական մի շարք իրողություններ, բնականաբար, տրվում են համադրությամբ՝ և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն տարբերակներով՝ ավելի տեսանելի

դարձնելու համար երկու գրականներում առկա ընդհանրություններն ու տարբերությունները:

Գիրքը, լինելով դասագիրք, ամբողջացնում է արևմտահայերենի մակ գիտական մշակված տեսությունը:

Այս դասագիրքը հեղինակը ստեղծել է՝ հաշվի առնելով մախորդների փորձը, ընդունելով դրանց առավելությունները և հաճախ մերժելով դրանցում առկա վրիպումներն ու բացթողումները:

«Արևմտահայերենի դասագիրքը» ամբողջական է և համապարփակ. բաղկացած է չորս մասերից. տեսություն, որ, ինչպես ասվեց, ընդգրկում է արևմտահայերենի ամբողջ համակարգը՝ հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն, գործնական աշխատանքների բաժին, որ վարժությունների միջոցով հնարավորություն է տալիս ամբացնելու տեսական գիտելիքները. բնագրային օրինակներ, որ ճաշակավոր ընտրությամբ քաղված են արևմտահայ և ասիոտքահայ ճանաչված հեղինակների գործերից (հատվածներ են կամ ամբողջական ստեղծագործություններ) և հարուստ նյութ են ընձեռում ընթերցողին՝ սեփական դիտարկումների համար: (Ի դեպ, ուսուցողական նպատակով որոշ բնագրեր տրվում են արևմտահայ ուղղագրությամբ): Եվ վերջապես, դասագրքին կցված է հարուստ բառարան, որ հեղինակի կազմած «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան»ի (Երևան, 2000թ.) համառոտված տարբերակն է. ներառում է շուրջ 8500 բառ և դարձվածքային միավոր, որոնք ունեն իմաստային կամ ձևային գոնե մեկ տարբերություն արևելահայերենից: Այդ բառարանը մեծ չափով դյուրացնում է ոչ միայն բուն արևմտահայերենի բառապաշարի յուրացումը, այլև ավելի արդյունավետ է դարձնում ուսուցումը. մեծապես նպաստում է ընթերցողի մակ արտասանական-ուղղախոսական և հնչյունական ու քերականական գիտելիքների հարստացմանը. զլխաբառերը տրվում են հին ուղղագրությամբ, նշվում են բառերի արտասանությունները, բառաձևերը և հընչյունափոխական տարբերակները հղվում են հանձնարարելի տարբերակներին, տըրվում են բառի խոսքիմասային պատկանե-

լությունը, ապա՝ բառի արտահայտած իմաստները արևմտահայերենում:

Լեզվական շատ փաստեր ներկայացվում են նորովի՝ սեփական դիտարկումների հիմքով, և իբրև ելակետ ունեն ժամանակակից հայ լեզվաբանության պահանջները: Այդ առումով՝ դասագիրքը ներկայանում է մի նոր կողմով և առավելությամբ՝ որպես մի շարք խնդիրների գիտական նկարագրության ուշագրավ աղբյուր: Այսպես՝ հայտնի է, որ ըստ համալիր հնչյունափոխության՝ գրական արևմտահայերենում պայթական բաղաձայնների գրաբարյան եռաստիճան համակարգը վերածվել է երկաստիճան խլազուրկ համակարգի. բոլոր խուլ պայթականները դարձել են ձայնեղներ, իսկ բոլոր ձայնեղ պայթականները՝ շնչեղ խուլեր: Համընդհանուր ընդունելություն գտած այս դրույթը, սակայն, Ռ. Սաքապետոյանի համոզմամբ, կարիք ունի որոշ ճշգրտումների, ինչ և համոզիչ կերպով անում է դասագրքի հեղինակը՝ հիմնվելով արտահայտված առանձին կարծիքների (Հ. Աճառյան, Ա. Սարգսյան) և հատկապես սեփական դիտարկումների վրա: Արդյունքում ունենում ենք արևմտահայերենի պայթական բաղաձայնների արտասանության մեջ տեղի ունեցած հետաքրքիր տեղաշարժերի վերաբերյալ համոզիչ պատկեր. «Մեր քննության արդյունքում պարզել ենք, -գրում է Սաքապետոյանը, -որ պարզ խուլերի առկայությունը արևմտահայերենում հաճախ փոխազդեցական հնչյունափոխության հետևանք է... Արտասանության պլանում միտում է նկատվում, որ արևմտահայերենին լիովին խորթ չեն պարզ խուլերը. որոշ դեպքերում վերականգնվում է խուլ հնչյունների զրության և արտասանության նույնությունը, ուստի վերականգնվում է պայթական բաղաձայնների եռաստիճան համակարգի նախնական վիճակը» (էջ 12): Բերված օրինակներից են՝ *ախախար*, *աղբյուր*, *ողբ*, *Հայաստան*, *գժբախտ*, *հարուստ*, *փախուստ* և բազմաթիվ նման բառեր: Կամ՝ խոսելով արևելահայերենում և արևմտահայերենում ստացական հոգնակի կազմության մասին՝ Սաքապետոյանը տեսականորեն ընդհանրացնում է զրավոր և բանավոր խոսքում հաճախ հանդիպող այդ ձևերի կազմության նշմարվող օրինաչա-

փությունները, այն է՝ արևմտահայերենում միավանկ գոյականների ստացական հոգնակին կազմվում է սովորական հոգնակին հավելելով **-նի** հատուկ հոգնակերտը, ապա՝ հողը, ինչպես՝ **հաց-եր-նի-ս, տուն-եր-նի-դ, աշակերտ-ներ-նի-ս** և այլն:

Այլևայլ բազմաթիվ հարցերի նորովի քննարկումներից նշենք ևս մեկը: Արևմտահայերենի ավանդական քերականությունը հակված է գրական արևմտահայերենի բայական համակարգում առանձնացնելու երեք եղանակ՝ սահմանական, ըղծական (ստորադասական), հրամայական: Հարկադրական եղանակի առկայության մասին արևմտահայ քերականները խոսում են որոշ վերապահությամբ: Ըստ այդմ՝ արևելահայերենի հարկադրական և ենթադրական եղանակների ժամանակաձևեր բաղադրող կառույցները (**կ, արևմտ. կը // կ՛ և պիտի // պետք է** եղանակիչներով) ընկալվում ու ներկայացվում են որպես արևմտահայերենի սահմանականի անկատար ներկա (**կը գրեմ**), անկատար անցյալ (**կը գրեի**) և համադրական ապառնիի (**պետք է գրեմ, պետք է գրեի**) ժամանակաձևեր, իսկ ապակատար (ապառնի) դերբայով և օժանդակ բայով կազմվող բաղադրյալ դիմավոր ձևերը ավանդաբար նշվում են որպես սահմանականի վերլուծական ապառնի ժամանակաձևեր, թեև նույն քերականության դասագրքերում վերջինների մասին սովորաբար նշվում է, որ արևմտահայերենում դրանք արտահայտում են հարկադրանքով, ստիպողաբար կատարվելիք գործողություն (**գրելու է = պետք է գրի**: Օր.՝ «Հասկցայ, ի՞նչպես հանել տալու եմ ուրեմն պատկերս, որ տարակոյս չմնայ, որ պզտիկ մարդ չեմ...» (Հ. Պարոնյան), «Ազգ մը... միշտ իր յոյսը է՛ն առաջ իր վրայ դնելու է: Այս ճշմարտութիւնը վե՛՛ն իսկ չի վերցներ» (Ա. Չոպանյան):

Ռ. Մաքապետոյանը, հիմք ընդունելով ապառնիով կառույցների քերականական իմաստի այս յուրահատկությունը, դրանք դիտում է որպես առանձին եղանակի բայաձևեր՝ հարկադրական ապառնի՝ **գրելու է**, հարկադրական անցյալ՝ **գրելու էի**. «Այս եղանակի գոյությունը, գրում է նա, արևմտահայերենում ընդունում են ոչ բոլոր քերականները. նույնիսկ Սփյուռքում

լույս տեսած վերջին դասագրքում (Կ. Առաքելյան) այս մոտեցումը բացակայում է: Մեր մոտեցման հաստատումը գտնում ենք Եդ. Տասնապետյանի «Քերականութեան» մեջ» (տե՛ս էջ 159):

Հատուկ ուշադրության են արժանի հեղինակի բացատրությունները արևմտահայերենի դերբայների, մասնավորապես ժխտական դերբայի կազմության և գործածության, բայասեռի քերականական կարգի առանձնահատկությունների, հարակատարով բայաձևերի և բազմաթիվ այլ խնդիրների վերաբերյալ:

Այս գիրքը տարիների տքմաջան և ուշադիր աշխատանքի արդյունք է: Եվ պատահական չէ, որ ընթերցողը այստեղ կարող է գտնել նաև շատ հետաքրքիր հարցադրումներ մեր լեզվի ո՛չ միայն արևմտահայ հատվածի վերաբերյալ: Այս առումով ուշագրավ են նաև Ռ. Մաքապետոյանի հարցադրումները հայերենի երկու տարբերակներում հոդակապի գործածության, օտար բառերի և դրանց հայերեն համարժեքների նկատմամբ հայերենում պատմականորեն ձևավորված վերաբերմունքի և այլևայլ հարցերի առնչությամբ:

Գիրքը՝ որպես այդպիսին, այսինքն՝ որպես արևմտահայերենի առաջին բուհական դասագիրք, զերծ չէ հնարավոր վրիպումներից ու բացթողումներից. օրինակ՝ քիչ են բնագրային օրինակները, իսկ առանձին տեսական հարցերի վերաբերյալ առհասարակ բնագրային «հաստատումներ» չկան, որոշ ենթաբաժիններ (օր.՝ արևմտահայերենի հնչյունական համակարգի նկարագրությունը) հստակ, կամ այսպես կոչված, դասագրքային տարբածանումներ չունեն, ինչը երբեմն դժվարացնում է զանգվածորեն հարողովող տեսական նյութի ընկալումը: Դասագրքի համար, կարծում ենք, կարևոր պայման է բերվող օրինակների հստակ ընդգծումը որևէ ձևով (չեղ տառերով, թավ ևն): Այստեղ ինչ-ինչ տեխնիկական պատճառներով այդ խնդիրը լուծված չէ: Մեր տպավորությամբ՝ դասագրքում համասեռ կերպով չեն ներկայացված լեզվական մակարդակները: Արևմտահայերենը և արևելահայերենը, լինելով մեկ ազգային լեզվի երկու տարբերակներ, միաժամանակ լեզվական ուրույն

համակարգեր են, ունեն որոշակի առանձնահատկություններ (տարբերություններ): Դրանք առավելապես են դրսևորվում ոչ միայն հնչյունաբանության և բառագիտության, այլև ձևաբանության մեջ: Առաջին երկուսում առկա այդ տարբերությունները արժանացել են հետազոտողի հատուկ ուշադրությանը: Եվ, ի պատիվ նրա պետք է ասել, որ մինչև այժմ արևմտահայերենին նվիրված դասագրքերից և ոչ մեկում հնչյունաբանության ու բառագիտության խնդիրները չեն քննարկվել նույնքան հետևողականությամբ ու հանգամանորեն: Մինչդեռ ձևաբանության բաժինը դասագրքում ներ-

կայացված է փոքր-ինչ համառոտ:

Սրանք, իհարկե, մասնակի թերություններ են և բնավ չեն խաթարում հաջողված այս ձեռնարկումի անուրանալի արժանիքները: Դասագիրքը արդեն իսկ հաջողությամբ ծառայում է այն գործին, որի համար կոչված է՝ գիրք բանասիրական ֆակուլտետների ուսանողների, ուսուցիչների, լրագրողների, թարգմանիչների, դերասանների և, առահասարակ, բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են լեզվի հարցերով:

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ